

## **ԵԱՀԿ-ն կհամագործակցի ՀՀ փրկարար ծառայության հետ՝ բարելավելու պատրաստվածությունը արտակարգ իրավիճակների դեպքերում**

ԵՐԵՎԱՆ, 8 ապրիլի 2008թ. – Այսօր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ՀՀ փրկարար ծառայության /ՀՓԾ/ միջև ստորագրվել է իրականացման համաձայնագիր, որում հստակեցվել են 2008թ. համագործակցության շրջանակները՝ հետամուտ ՀՀ փրկարար ծառայության հանրային տեղեկատվության կենտրոնի բարելավմանը:

Պայմանագրով սկիզբ է դրվում ԵԱՀԿ աջակցությամբ իրականացվող ծրագրի, որը ներառում է տեխնիկական աջակցություն կենտրոնին, անձնակազմի վերապատրաստում, «Արտակարգ ալիք» հեռուստածրագրերի արտադրություն և «Արտակարգ» թերթի բարելավում:

Ծրագիրը իրականացվում է ՀՀ փրկարար ծառայության խնդրանքի համաձայն և հաջորդում է 2007թ. դեկտեմբերին ԵԱՀԿ կողմից իրականացված կարիքների գնահատումը, որում առանձնացվում էին Կենտրոնի հետագա ռազմավարական զարգացման հիմնական ուղղությունները: Ծրագիրը համալրում է այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ջանքերը և ՀՀ փրկարար ծառայության զարգացման 2008-2012թթ. ռազմավարության մաս է կազմում:

«Յուրաքանչյուր կառավարության առաջնային պարտականություններից է հնարավորինս աջակցել բնական և տեխնածին աղետների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանը: ԵԱՀԿ-ն, որպես հիմնական տարածաշրջանային անվտանգության կազմակերպություն, ունի մանդատ աջակցելու Հայաստանի իշխանություններին բնակչության անվտանգությունը բարելավելու ուղղությամբ», - նշեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի դեսպան Սերգեյ Կապինսուր: - «Այն ներառում է ֆիզիկական անվտանգությունը, և մենք ուրախ ենք աջակցելու ՀՀ իշխանություններին՝ ճգնաժամային իրավիճակների հաղթահարման բնագավառում ծրագրերի իրականացմանը»:

«Արտակարգ իրավիճակների լրատվությունը կենսական նշանակություն ունի, քանի որ մարդիկ պետք է իմանան՝ իրենց ինչ վտանգներ ու ռիսկեր են սպառնում, պետք է իմանան, թե ինչ են անում կառավարման մարմինները, և վերջապես պետք է իմանան, թե ինչ պետք է անեն իրենք, ինչ վարքականոն դրսևորեն արտակարգ իրավիճակների ժամանակ: Այդ առումով, ճշգրիտ, ամբողջական և ժամանակին տրված տեղեկատվությունը կանխում է խուճապը, քաոսը, մարդկային կյանքեր է փրկում և նպաստում հասարակության հետ վստահելի երկխոսությանը», հավելեց ՀՓԾ տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը:

Հանրային տեղեկատվության կենտրոնի մանդատը նախատեսում է տրամադրել տեղեկատվություն և կանոնավոր վերապատրաստում՝ բարձրացնելու պետական և ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների և բնակչության պատրաստվածությունը բնական և տեխնածին աղետների դեմ: Տեղեկատվական կենտրոնում կկազմակերպվեն զանազան հանրային միջոցառումներ՝ քննարկումներ, ներկայացումներ, սեմինարներ, հանդիպումներ՝ ապահովելու հրապարակայնությունը և տեղեկատվության մատչելիությունը: